

**ԵՐԵՎԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՆԵՐՈՒՄ**

ՄԱՑԱԿԱՆՅԱՆ Ա. Մ.

Հետխորհրդային Հայաստանում, պայմանավորված քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային ոլորտների փոփոխություններով և ընտանիքների մեծամասնության կենսական պայմանների վատթարացմամբ, ինչպես նաև բարոյական չափանիշների կտրուկ խաթարմամբ, փոխվեց վերաբերմունքը երեխաների նկատմամբ՝ ընդհուպ նրանց դուրսմղումը ընտանիքից: Այդ մասին փաստում են ինչպես վիճակագրական տվյալները, այնպես էլ մի շարք միջազգային կազմակերպությունների և ՀԳ-ների հետազոտությունները: Մանկալքությանը և որբության երևույթները այսօր հասարակության լրջագույն խնդիրներից են: Դժվար է գտնել դրանց վերաբերյալ համակողմանի սահմանում այսօրվա հայ իրականության համար:

Հայաստանի անկախացումից հետո երեխայի սոցիալական պաշտպանության դաշտում վարած քաղաքականությունը սահմանափակվում էր նրանով, որ ծնողական խնամքից զրկված երեխաներին տեղավորում էին հատուկ տիպի հաստատություններում (մանկատներ, գիշերօթիկ հաստատություններ): Փաստորեն, հասարակությունը չէր ցուցաբերում բավարար ուշադրություն այդ ընտանիքների խնդիրների նկատմամբ, այլ լուծում էր միայն երեխայի խնամքի հարցը՝ մեկուսացնելով նրան ընտանիքից:

1992-2009 թթ. ժամանակահատվածում երկրաշարժի, արցախյան ազատամարտի և այլ պատճառներով երկկողմանի որբ 1297 երեխաների խնամակալեցին ազգականները և երբնիցե չհանձնեցին մանկատուն՝: Պաշտոնական վիճակագրական տվյալները փաստում են, որ հետխորհրդային Հայաստանում այդ նույն ժամանակահատվածում արձանագրվեց մանկական խնամակալական կազմակերպությունների թվի աճ: Երեխային հաստատությունում տեղավորելու փաստը ձևակերպվեց որպես պետության սոցիալական աջակցություն ընտանիքին: Այս գործընթացին մասնավորապես նպաստեց նաև սփյուռքի ֆինանսական և մեծաքանակ մարդասիրական աջակցությունը մանկատներին: Այսպես, 1996 թ. ՀՀ-ում գործել է 7 մանկական խնամակալական կազմակերպություն, որից 5-ը՝ պետական, 2-ը՝ ոչ պետական: Այս կազմակերպություններում ապաստան է գտել 477 երեխա, ընդ որում 172-ը ունեցել է մայր: Երկկողմանի ծնողազուրկ երեխաների թիվը կազմել է ընդհանուր թվի 57%-ը²:

¹ Հայ Օգնության Միություն («Զոհված ազատամարտիկների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների խնամակալություն» ծրագրի տվյալների շտեմարան, Ե., 2010):

² Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 122, ց. 6, գ. 185, թթ. 1-5, ֆ. 122, ց. 6, գ. 187, թ. 1:

2002 թ. ՀՀ-ում գործել է 11 մանկական խնամակալական կազմակերպություն (8-ը՝ պետական, 3-ը՝ ոչ պետական), որոնցում ընգրկվել է 990 երեխա: Նույն տարվա ընթացքում կենտրոնացված հաշվառման են վերցվել որդեգրման ենթակա 219 երեխաներ. նրանցից 50-ը եղել է միայնակ մոր զավակ, իսկ 119 երեխայի ծնողներ տվել են որդեգրման համար գրավոր համաձայնություն: Երկկողմանի, միակողմանի ծնողագուրկ և այլ ծայրահեղ պատճառներով որդեգրման ենթակա երեխաների թիվը կազմել է 23%³: Ըստ 2005 թ. տվյալների՝ ՀՀ-ում գործող մանկական խնամակալական 13 կազմակերպություններում (8-ը՝ պետական, 5-ը՝ ոչ պետական) ապրել է 1,156 երեխա: 2005-ին որդեգրման ենթակա 164 երեխա վերցվել է կենտրոնացված հաշվառման: Նրանցից միայն 9-ն են (5%) երկկողմանի և միակողմանի ծնողագուրկ երեխաներ⁴: 2008 թ. տվյալներով՝ ՀՀ-ում գործել է մանկական խնամակալական 12 կազմակերպություն (8-ը՝ պետական, 4-ը՝ ոչ պետական)՝ 1,233 երեխայով: Նրանցից որդեգրման ենթակա 156 երեխաների ցանկում չկան երկկողմանի ծնողագուրկներ. 6-ը ընկեցիկ են, իսկ 12-ը՝ միակողմանի ծնողագուրկ (11%)⁵:

Ինչպես վկայում են աղյուսակ 1-ում բերված վիճակագրական տվյալները, տարեցտարի աճել է մանկատներում խնամվող երեխաների թիվը: Եթե 1996 թ. նրանց թվաքանակը կազմել է 477 երեխա, ապա 12 տարի անց նրանց թվաքանակն ավելացել է 756-ով, ընդ որում դիտարկվել է ոչ թե միակողմանի կամ երկկողմանի, այլ սոցիալական որբերի թվի աճ:

Աղյուսակ 1. Մանկատներում սաների թվաքանակի բաշխվածությունը (1996-2008 թթ.)

	1996	2002	2005	2008
Պետական	448	834	926	978
Ոչ պետական	29	156	230	255
Ընդամենը	477	990	1156	1233

Այդ երևույթը կարելի է պատճառաբանել հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր վիճակով, սակայն համեմատելով բնակչության աղքատության վերաբերյալ գոյություն ունեցող վիճակագրական ցուցանիշները՝ ըստ համապատասխան տարեթվերի, կարող ենք փաստել, որ հանրապետությունում արձանագրվել են աղքատության ցուցանիշի տոկոսային նվազման միտումներ:

³ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հրապարակումներ, 2003 թ., ՀՀ սոցիալական վիճակը, 2002 թ., էջ 155-156, 161, www.armstat.am

⁴ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հրապարակումներ, 2006 թ., ՀՀ սոցիալական վիճակը 2005 թ., էջ 187-188, 193, www.armstat.am

⁵ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հրապարակումներ, 2009 թ., ՀՀ սոցիալական վիճակը 2008 թ., էջ 218-219, 225, www.armstat.am

Աղյուսակ 2. Հայաստանի բնակչության աղքատության ցուցանիշները (1996-2008 թթ. %-ով⁶)

	1996	2002	2005	2008
Ոչ աղքատ	44.7	50.3	70.2	76.5
Աղքատ	27.1	36.6	25.2	20.4
Շատ աղքատ	28.2	13.1	4.6	3.1

Հայաստանում երեխաների սոցիալական պաշտպանության ոչ ճկուն համակարգը, երեխայի՝ մանկատանը հայտնվելու բազմաբնույթ պատճառներն իրենց բացասական ազդեցությունն են ունենում մանկատան պայմաններում երեխայի սոցիալականացման գործընթացի վրա: Մանկատան երեխաների սոցիալականացման խնդիրները բացահայտելու նպատակով հետազոտություն է իրականացվել Երևանի «Զատիկ», Գավառի, Վանաձորի և Գյումրու Ֆ. Նանսենի անվան մանկատաների՝ 1988-1992 թթ. ծնված 174 երեխաների շրջանում⁷: Ուշագրավ է գծապատկեր 1-ում⁸ արտացոլված՝ մանկատան շրջանավարտների պատկերը՝ ըստ երեխաների ծննդավայրի: Երեխաների 37.4%-ը ծնվել է Երևանում, որն առաջին հերթին պայմանավորված է հանրապետությունում բնակչության բաշխվածության ցուցանիշով (Երևանի բնակչությունը հանրապետության բնակչության 34.7%-ն է): Ընդհանուր առմամբ, հետազոտվող երեխաների 91.9%-ը ծնվել է քաղաքում:


Ելնելով մանկատան նախկին սաների կենսագործունեության համար բավարար պայմանների ապահովման անհրաժեշտությունից՝ 2003 թվականին ՀՀ կառավարության թիվ 1419-Ն որոշումով ընդունվեց «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը, որի նպատակն էր ապահովել ՀՀ մանկատաներում 1991 թ. 18 տարին բոլորածների սոցիալական պաշտպանությունը և նրանց ինտեգրումը հասարակությանը:

⁶ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Տարեգրքեր, Կենսամակարդակ, 2001, էջ 88, 2004, էջ 101, 2007, էջ 100, 2009, էջ 102, www.armstat.am

⁷ Հետազոտության համար օգտագործվել են «Հայ Օգնության Միություն» հասարակական, բարեգործական կազմակերպության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցությամբ, պետական բյուջեի ֆինանսավորմամբ 2006-2010 թթ. իրականացված «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի տարեկան հաշվետվությունները, Երևանի «Զատիկ», Գավառի, Վանաձորի և Գյումրու Ֆ. Նանսենի անվ. մանկատաների գրանցման մատյանները, մանկատաների 1988-1992 թթ. ծնված 174 սաների անհատական նկարագրերը, պաշտոնական վիճակագրական տվյալներ, մանկատան սաների հետ անմիջական առնչություն ունեցող շահագրգիռ կազմակերպությունների հաշվետվությունները:

⁸ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 1940-2000, 2002 թ., էջ 11, www.armstat.am

Գծապատկեր 1. Տոկոսային համադրություն



Աղյուսակ 3. 1988-1992 թթ. ծնված սաների թվաքանակի բաշխվածությունը՝ ըստ սեռատարիքային կազմի

	2006		2007		2008		2009		2010		Ընդամենը		Ընդ.
	արջիկ	տղև	արջիկ	տղև	արջիկ	տղև	արջիկ	տղև	արջիկ	տղև	արջիկ	տղև	
Զատիկ	9	7	7	7	8	8	10	6	8	4	42	32	74
Գավառ	2	4	4	1	8	2	2	2	2	3	18	12	30
Վանաձոր	4	3	8	5	2	3	2	13	5	3	21	27	48
Գյումրի	3		3		2	3	2	2	2	5	12	10	22
Ընդ.	18	14	22	13	20	16	16	23	17	15	93	81	174

Մինչև մանկատան շրջանավարտներին պետական աջակցություն ցուցաբերելը 1991 թ. ի վեր շուրջ 150 շրջանավարտներ չափահաս դառնալուց հետո չեն ունեցել բնակարան և հիմնականում բնակվել են մայրաքաղաքի տարբեր հանրակացարաններում և պատահական վայրերում: Նրանց 30%-ը եղել է անօթևան և գիշերել է ուր պատահի՝ շենքերի նկուղներում և ձեղնահարկերում, 90%-ը չի ունեցել մշտական աշխատանք, 10%-ը՝ մասնագիտություն, իսկ որոշ մասը՝ փաստաթղթեր: Դրա հետևանքով մանկատան սաների շրջանում գրանցվել են նաև մարմնավաճառության, մանր հանցագործությունների, թրաֆիքինգի դեպքեր⁹: Մանկատան շրջանավարտներն ունեցել

⁹ Հայ Օգնության Միություն, Երեխաները Հայաստանի մանկատներում և հատուկ դպրոցներում. Թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհեր, Ե., 2005:

են նաև առողջական և սոցիալ-հոգեբանական մի շարք չուժված խնդիրներ: Այդ տարիներին նրանց նյութական օգնության, աշխատանքի տեղավորման, բնակելի տարածքով ապահովման խնդիրների լուծման հարցերում մեծ աջակցություն են ցուցաբերել միջազգային ու տեղական ոչ կառավարական մի շարք կազմակերպություններ: Մակայն աջակցությունը կրել է տարերային բնույթ, իսկ պետության կողմից շրջանավարտների շրջանում պարբերա-բար հաշվառում չիրականացվելու պատճառով նրանց թվաքանակի և բնակության վայրի վերաբերյալ վիճակագրական ամբողջական տվյալներ չկան:

Երևանի «Զատիկ», Գավառի, Վանաձորի և Գյումրու Ֆ. Նանսենի անվ. մանկատներում կատարված հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ գոյություն ունեն ինչպես յուրաքանչյուր մանկատանը ձևավորված և միայն այդ մանկատանը բնորոշ առանձնահատկություններ, այնպես էլ ընդհանուր օրինաչափություններ, որոնք հատուկ են տարբեր քաղաքներում տեղակայված մանկատներին: Կիրառական առաջարկներ կատարելու նպատակով կարևոր էր պարզել, թե ինչ ավանդույթներ և սովորույթներ են ձևավորվել այդ մանկատներում, և վերջիններիս առկայության պարագայում ինչպես են դրանք ներգործում երեխայի զարգացման վրա:

Երեխայի սոցիալականացման համար կարևորագույն նախապայման է մշակութայնացումը: Այս գործընթացում կատարվում է սոցիալ-մշակութային միջավայրի՝ տարածության-ժամանակի, գործունեության միջոցների, շփումների, բարոյական չափանիշների յուրացում: Մանուկ հասակում մշակութայնացումն իրականացվում է դաստիարակության ձևով, որը դառնում է երեխայի վրա նպատակաուղղված ազդեցության միջոց՝ բնական, սոցիալ-մշակութային, կյանքի համար անհրաժեշտ և իրականության մարտահրավերներին համարժեք սովորույթներ, հմտություններ ու կարողություններ ձևավորելու նպատակով¹⁰:

Սովորույթը որոշակի հասարակության կամ հասարակական խմբի մեջ ավանդաբար փոխանցված և դրանց անդամների համար սովորություն դարձած վարքագիծն է¹¹: Փորձենք վերլուծել ավանդույթների և սովորույթների համատեքստում մանկատան երեխայի զարգացման առանձնահատկությունները երեք մակարդակներում՝ 1) բազիսային-սոցիալական միջավայրի մեկնաբանում սոցիալական ինստիտուտի ընդհանրության համատեքստում, ինքնապաշտպանական պատճառականություն, անձնական կյանքի արժեքներ, առողջություն, ապահովություն և պաշտպանվածություն. 2) անհատական-անձնական-սոցիալական ընդհանրություններով ձևավորված բարոյական չափանիշների մեկնաբանում՝ միջանձային հարաբերությունների, արժեհամակարգի, մշակույթի

¹⁰ Энциклопедический словарь по культурологии (под ред. А. А. Радугина), М., 1997, с. 281.

¹¹ Անաստասյան Բ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում (Ընտանիք և ազգային հոգեբանություն, Ե., 1991, էջ 28-29):

համատեքստում. 3) մասնագիտական-աշխատանքային-մասնագիտական, աշխատանքային, քաղաքացիական և նմանատիպ ընդհանրություններին սուբյեկտիվ մասնակցություն ու մեկնաբանում:

Ըստ հետազոտության արդյունքների՝ մանկական խնամակալական հաստատությունների ներսում սաների համար որոշակի սոցիալ-մշակութային միջավայրի ապահովման տեսանկյունից, որոնք կարող են ազդել նրանց անձնական կյանքի արժեքների, պաշտպանվածության և այլ հանգամանքների վրա, դեռևս կան մի շարք չլուծված հիմնախնդիրներ: Մասնավորապես, այդ հաստատությունների թիվն աճեց այնքան արագ, որ կրթական համակարգը չհասցրեց վերջիններիս ապահովել հատուկ մասնագետներով: Հաստատությունների սաների հետ հաճախ աշխատում էին մանկապարտեզների դաստիարակներ կամ հանրակրթական դպրոցների մանկավարժներ և նույնիսկ պատահական մարդիկ: Օրինակ՝ Երևանի «Զատիկ» և Մարի Իզմիրյանի անվ. մանկատները նախկինում եղել են հատուկ տիպի մանկապարտեզներ: Կարգավիճակի փոփոխությունից հետո, սակայն, աշխատակազմը փոփոխություն չի կրել: Անհերքելի փաստ է, որ այս կատեգորիայի երեխաները առանձնահատուկ են: Նրանք, որպես կանոն, ունեն մեծահասակների հետ հարաբերությունների բացասական փորձ, և նրանցում բացակայում են վարքագծային դրական կարծրատիպերը: Հետազոտության արդյունքները փաստում են, որ այս խմբի բոլոր երեխաներին բնորոշ են միջանձային հարաբերությունների դժվարությունները, կոնֆլիկտայնությունը, ագրեսիվությունը: Առավել հաճախ նրանք ապրում են «ագրեսիվ անհաջողակ» սցենարով: Այս ամենին կարելի է հավելել որակներ, որոնք ձևավորվում են արդեն մանկատան կյանքի ներքին օրենքներով պայմանավորված միջավայրում՝ ինքնուրույնության պակաս, սպառողական մտածողություն, ինքնուրույն որշումներ կայացնելու և ընտրություն կատարելու անկարողություն:

Որբությունը երեխայի, իսկ այնուհետև չափահաս մարդու կյանքում թողնում է անջնջելի հետք: Ծրագրի ուսումնասիրությունները փաստում են, որ նշյալ հաստատություններում այս կատեգորիայի երեխաների դաստիարակության համար լիարժեք պայմանների բացակայությունը նրանց սոցիալական զարգացման գործընթացում առաջացնում է լուրջ խնդիրներ¹²: Դրանք հետագայում դրսևորվում են սոցիալական ակտիվության և իրավասության ցածր մակարդակի ձևով, որոնք արտահայտվում են անձնական կյանքը պլանավորելու անկարողությամբ, սեփական ընդունակությունների և կարողությունների մասին աղոտ պատկերացումներով: Նրանց բնորոշ է ոչ համարժեք ինքնագնահատական, ընտանիքում մեծացած երեխաների համեմատ՝ կրթական և ուսուցողական ցածր պատճառականացում:

¹² Հայ Օգնության Միություն, Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին, Տարեկան հաշվետվություն, Ե., 2009, էջ 5:

Մանկատների աշխատակազմը (դաստիարակներ, սոցիալական աշխատողներ, հոգեբաններ) կիրառում է ընդհանուր, տվյալ հաստատության պայմաններին չհամապատասխանեցված մոդելներ: Դրանք աշխատակազմն ընդունում է որպես կարգադրություն, ինչը իր հերթին առաջացնում է օտար մոդելի բացասում (անգամ այդ մոդելի անթերի լինելու դեպքում) կամ դրա ձևական կիրառում: Այնինչ մանկատները գտնվում են աշխարհագրորեն տարբեր շրջաններում, որոնք իրարից էապես տարբերվում են բարբառային, կենսակերպի, կենցաղավարության ավանդույթներով, բնակլիմայական, սոցիալ-տնտեսական պայմաններով:

Ծնողներից կտրված և հաստատության պայմաններում խնամվող երեխայի մեջ գերակայում է վատ տրամադրությունը: Մեծամասնությունն ունի տազնապի զգացողություն և ինքնավստահության կորուստ, կորչում է կյանքի նկատմամբ հետաքրքրությունը, ի հայտ է գալիս անպաշտպանության զգացողություն: Ընդ որում, ինչքան շուտ է երեխան կտրվում ընտանիքից, այնքան ավելի վատ են արտահայտվում հոգեկան զարգացման փոխակերպումները: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հետազոտվող խմբի 174 սաների 29%-ը հանձնվել է մանկատան խնամքին 5-7, 49%-ը՝ 8-12, իսկ 22%-ը՝ 13-17 տարեկան հասակում, ընդ որում երեխաների 83%-ն ունի մանկատան խնամքին հանձնված քույրեր և եղբայրներ: Սաների 17%-ը երկկողմանի ծնողազուրկ է, 27%-ի մայրը մահացած է կամ ճանաչվել է անհայտ բացակայող: Սաների 71%-ը պահում է կապը կենսաբանական ընտանիքի հետ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրեթե բոլորն ունեն առողջական խնդիրներ, որը նաև ժառանգականության հետևանք է: Անխուսափելի են հոգեբանական խնդիրները, որոնք պայմանավորված են «լքված լինելու» փաստով: Սա էլ իր հերթին ազդեցություն է թողնում երեխայի ֆիզիկական վիճակի վրա: Ըստ բժշկական հետազոտությունների՝ աղյուսակ 4-ում ներկայացված թվերից ակնհայտ է, որ լիարժեք առողջ է համարվել երեխաների ընդամենը 15%-ը: Այս տեսանկյունից ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է Գյումրու մանկատանը, որը պայմանավորված է հաստատության հարևանությամբ գտնվող Նարեկացի հիվանդանոցի կողմից մանկատան սաների համար պարբերաբար իրականացվող բժշկական հետազոտություններով: Այս սովորույթը երեխաներն ընկալել են որպես օրինաչափություն, որն էլ նպաստել է սեփական առողջության նկատմամբ զգոն և հետևողական վարքագծի ձևավորմանը: Վանաձորի մանկատանը արձանագրվել է լիարժեք առողջ երեխաների ամենացածր ցուցանիշը (6%): Սա պայմանավորված է աշխատակազմի կողմից առողջապահական հարցերի նկատմամբ բացահայտ անտարբերությամբ:

Հանձին ընտանիքի՝ երեխայի մեջ բացակայում է փորձառության և գիտելիքների կայուն փոխանցման կարևորագույն օղակներից մեկը: Դրա հետևանքով նրանք չեն յուրացնում միջանձային հարաբերությունների բազմազանությունը, քանի որ մանկատան միօրինակ կյանքը նպաստավոր պայմաններ չի ստեղծում: Իսկ հաստատության պայմաններում երեխաների վարքագծի կանոնակարգումը խոչընդոտում է երեխայի բնական ակտիվությանը: Երեխայի մեջ

Աղյուսակ 4. 1988-1992 թթ. ծնված սաների թվաքանակի բաշխվածությունը՝ ըստ առողջական վիճակի

	Զատիկ միջոցով ձևառ	Գոլոմ միջոցով ձևառ	Գոլոմ միջոցով ձևառ	Գոլոմ միջոցով ձևառ	Գոլոմ միջոցով ձևառ	Գոլոմ միջոցով ձևառ	Գոլոմ միջոցով ձևառ	Գոլոմ միջոցով ձևառ	Ընդամենը	Ընդամենը
2006	16	2	6		7		3	1	32	3
2007	14	3	5		13	1	3		35	4
2008	16	2	10	5	5		5	1	36	8
2009	16	2	4		15	2	4		39	4
2010	12		5	2	8		7	5	32	7
Ընդամենը	74	9	30	7	48	3	22	7	174	26

արտահայտվում են զգացմունքային աններդաշնակ զարգացման մի շարք դրսևորումներ, որոնք են սիրո, ընդունված լինելու մշտապես չբավարարված պահանջը, կենսուրախության, լավատեսության բացակայությունը, անորոշության զգացողությունը: Հետևաբար երեխան դրսևորում է ագրեսիվ-բացասական վարքագիծ: Ծնողների կողմից սիրված լինելու չբավարարված պահանջը արտահայտվում է հակասոցիալական վարքի, զգացմունքային լարվածության, ստախտության, նախանձի դրսևորումներով: Կովարարությունը, կոնֆլիկտայնությունը իրականում սեփական հնարավորությունները գնահատելու անկարողությունից դրդված պաշտպանական դրսևորումներ են:

Երեխան հաճախ հայտնվում է մանկատանը ոստիկանների կամ օտար մարդկանց միջնորդությամբ և չի ունենում որևէ փաստաթուղթ: Դա կարող է պատճառ դառնալ, որ երեխային տրվի նոր անուն, կամ անունը սխալ գրառվի: Երևանի և Գավառի մանկատների սաներին բնորոշ է կեղծանուններ օգտագործելու սովորությունը, ընդ որում կեղծանունը սովորաբար մատնանշում է ֆիզիկական արատ, որևէ արտահայտված թերություն և ներառում ծաղրի տարրեր: Վանաձորի և Գյումրու մանկատներում նման սովորություն չի ձևավորվել: Երբեմն հայտնի չեն նաև երեխայի ծննդյան տվյալները, հետևաբար՝ նաև տարիքը: Այս պարագայում իրականացվում է դատաբժշկական քննություն: Դրա շնորհիվ երեխայի ֆիզիոլոգիական և արտաքին ցուցանիշների հիման վրա գրանցվում են ձևական տվյալներ: Երևանի և Գավառի մանկատների սաները իրենց ծննդյան տարեդարձը նշում են խմբակային՝ տվյալ ամսվա մեկ օրը, իսկ Վանաձորի և Գյումրու մանկատներում նշում են անհատապես, որը չի պատճառաբանվում. պարզապես, տարիների ընթացքում ձևավորված սովորություն է:

Մանկավարժներն ու դաստիարակները հաճախ գիտակցաբար փորձում են երեխաների հետ իրենց հարաբերությունները կառուցել՝ նմանակելով ընտանեկանին, իրենց առջև նպատակ դնելով փոխարինել երեխայի հորը կամ մորը: Ընդ որում, շեշտը դրվում է շփումների զգացմունքային շերտի վրա, ինչը, սակայն, չի տալիս ակնկալված արդյունք, այլ առավել հաճախ զգացմունքային առումով սպառում է մեծահասակին, փոխարենը բացասական հետևանք է ունենում երեխայի համար, քանի որ մանկատան աշխատակիցների հետ ընտանեկան հարաբերությունների պատրանքը հետագայում իր ազդեցությունն է թողնում սեփական ընտանիքն ունենալու պատկերացումների վրա: Երևանի մանկատան տնօրենին, օրինակ, մանկատան բոլոր սաները կոչում են «հայր Աշոտ», իսկ Վանաձորի մանկատան տնօրենին՝ «քեռի Աշիկ»: Մեծահասակի գերուշադրությունը, ընտանիքի դերի տեսական գերազնահատումը և կենսափորձի բացակայությունը բերում են մի կողմից ընտանիքի և նրա անդամների իդեալականացմանը, իսկ մյուս կողմից՝ ընտանիքի սեփական, բացասական մոդելի ենթագիտակցական կրկնօրինակմանը: Ընդ որում, ընտանիքի դասական մոդելի մասին պատկերացումները աղոտ են, հազեցած չեն կենցաղային մանրամասներով, իսկ բացասական մոդելի շուրջ պատկերացումները ծայրահեղ որոշակի են և զգացմունքային առումով՝ գերհազեցած: Այս երկու մոդելների բախումը ծնում է պահանջների կոնֆլիկտային համակարգ. անիրատեսական-դրական և հստակ ձևակերպված-բացասական:

Մանկուց ձևավորվում են սեռային տարբերությունների վերաբերյալ պատկերացումները: Նախադպրոցական տարիքում արդեն երեխան ընդօրինակում է նույն սեռի ներկայացուցիչներին հատուկ վարքագծային ձևերը, հետաքրքրություններն ու արժեքները: Այս մասին Վանաձորի և Գյումրու մանկատաների սաների պատկերացումները առավել հստակ են և հասցեական: Վանաձորի մանկատանը ձևավորված սովորության համաձայն՝ աղջիկների ամուսնությունը վերածվում է մեծ տոնի: Այս մանկատաներից հարս տանելը Վանաձորում և Գյումրիում համարվում է մարդասիրական, ինչպես նաև փեսացուի ընտանիքի պարկեշտությունը վկայող քայլ: Իրականացվում են բոլոր ավանդական ծեսերը, որոնց կազմակերպական աշխատանքներին մասնակից են դառնում պետական այրեր, հասարակական կազմակերպություններ, մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ: Հետևաբար հասարակությունը նվազ քննադատաբար է մոտենում հետագա հնարավոր խնդիրների առաջացման պարագային, քանի որ ակտիվ մասնակցությունը ձևավորում է նաև պատասխանատվության զգացում: Միննույն ժամանակ երիտասարդ սերնդի մեջ ձևավորվում են սեռային պատկանելության դասական պատկերացումներ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում աղջիկների և տղաների միջև բնականոն հարաբերությունների ձևավորման վրա:

Երևանի և Գավառի մանկատների երեխաների միջև ձևավորվում են ոչ թե ընկերական, այլ ազգակցականի նմանվող հարաբերություններ, ինչպես քույրերի և եղբայրների միջև: Այս երևույթը նաև ամրակայվում է մանկատներում միմյանց քույր-եղբայր կոչելու սովորությամբ: Հարաբերությունների նման պարտադրանքը կարող է դիտարկվել նաև որպես արդյունավետ գործոն՝ նպաստելով զգացմունքային կայունությանը, պաշտպանվածության զգացողությանը, երբ խումբը հանդես է գալիս որպես ընտանիք: Սակայն մյուս կողմից նման հարաբերությունները նպաստում են փակ ենթամշակույթի ձևավորմանը, որից երեխան հետագայում դժվարանում է դուրս գալ, ստեղծել շփումներ անձանոթների հետ, համարժեք գնահատել սեփական որակները, որոնք անհրաժեշտ են ընտրողական, ընկերական հարաբերություններ ստեղծելու համար:

Երեխաների հաջողություններն ուսման մեջ ապահովում են նրանց ինքնահաստատումը, այլ ասպարեզներում՝ ինքնագարգացումը և, ի վերջո, արդյունավետ սոցիալականացումը: Երեխաների հետաքրքրությունների անկաշկանդ դրսևորումը ապահովում է բարենպաստ պայմաններ՝ մասնագիտական ընտրության և ինքնուրույն կյանքին նախապատրաստվելու համար:

Մանկատան երեխայի մտապատկերներում բացակայում են կամ անորոշ են անցյալի հետ կապված պատկերացումները. նա առավելապես ապրում է ներկայով: Իսկ անցյալի աղոտ հիշողությունները խոչընդոտում են ապագայի մասին նրանց պատկերացումների ձևավորմանը: Մանկատան երեխային թույլ չի տրվում ծանոթանալ սեփական սոցիալական պատմությանը, նա ունի անորոշ պատկերացումներ իր ընտանիքի մասին: Կենսաբանական ընտանիքի հետ կապի առկայության պարագայում անգամ այդ բացը չի կարող լրացվել՝ հաշվի առնելով այն փաստը, որ հանդիպումների հաճախականությունը սովորաբար սահմանափակվում է տարեկան մեկ-երկու այցելությամբ: Ընտանիքում երեխային շրջապատում են ընտանեկան լուսանկարներ, տատիկ-պապիկներից փոխանցված և որոշակի կենսագրություն ունեցող կահկարասի, գույք: Տան միջավայրը, կենցաղավարությունը կրում են ընտանեկան ավանդույթներ, իսկ առօրյա կյանքում անընդհատ հիշատակվում են երեխայի մանկությանը վերաբերող պատմություններ: Մեծահասակների հետ առավելապես խմբակային սահմանափակ շփումները խոչընդոտում են երեխայի ինքնուրույնության ձևավորմանը: Օրվա համար սահմանված խիստ կանոնակարգը, մեծահասակների մշտական ցուցումները, հսկողությունը թույլ չեն տալիս երեխային ինքնուրույն պլանավորելու, իրականացնելու և վերահսկելու սեփական վարքը: Աստիճանաբար ձևավորվում է ուրիշների ցուցումներով առաջնորդվելու սովորությունը: Ընտանիքում երեխան բնականորեն հայտնվում է պահանջների և վերահսկողության ավելի ազատ միջավայրում: Կենցաղավարության շրջանակում ևս նա ակամայից մասնակցում և կիսում է մեծահասակի հետ որոշ պարտականություններ (մայրիկի կամ տատիկի հետ ճաշի պատրաստում,

խանութից սննդամթերքի կամ հագուստի ձեռքբերում, մաքրություն, վերանորոգում և այլն), ինչպես նաև պատասխանատվություն է կրում սեփական գործողությունների համար: Երեխան սովորում է ոչ միայն կատարել, այլև ինքնաբերաբար յուրացնում է պլանավորման, կազմակերպման, վերահսկողության բավականաչափ բարդ ծրագրեր: Էական է, որ վերոնշյալն իրականացվում է ոչ թե հատուկ, ուսուցողական մեթոդով, այլ ներառված է երեխայի համար հետաքրքրական գործունեության համատեքստում, հազեցած է մեծահասակների հետ շփումների զգացմունքային հարուստ շերտերով:

Մանկատան երեխային բնորոշ են ցանկությունների վառ արտահայտված այնպիսի գերակայություններ, որոնք անմիջականորեն առնչվում են առօրյա կյանքին: Այնինչ ընտանիքում մեծացող իրենց հասակակիցներին ամենօրյա հոգսերի հետ մտահոգում են նաև բազմաթիվ այլ խնդիրներ, որոնք վերաբերում են առավելապես մեծահասակներին՝ ծնողներին, ազգականներին, որը, անշուշտ, չի կարող իրական ազդակ լինել, սակայն որպես մտածողության ձևավորման նախապայման՝ կարևոր դեր ունի անձի զարգացման համար: Սահմանափակ պատճառականությունը, դրա միատարրությունը և պահի անհրաժեշտությունից ծնված խնդիրների անմիջական լուծումներից կախվածությունը պահպանվում են երեխայի գիտակցության մեջ հաստատությունում գտնվելու ամբողջ ընթացքում: Եթե ընտանիքում մեծացած երեխայի համար պատճառականությունը հիմնավորվում է ավելի երկարաժամկետ խնդիրներով՝ բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթությունը, ընտանիք կազմելու գաղափարը, մասնագիտական ասպարեզում հաջողություններն ու ձեռքբերումները, ապա հաստատության սաների համար պատճառականությունը սահմանափակվում է կարճաժամկետ՝ այսօրվա կամ առաջիկա օրերի խնդիրներով, իսկ երկարաժամկետ խնդիրները մնում են անորոշ և չձևակերպված:

Երեխաները, որպես կանոն, հաճախում են մանկատանը մոտ տեղակայված դպրոցը՝ լրացուցիչ տրանսպորտային ծախսերից խուսափելու համար: Գավառի մանկատան երեխաների մեծամասնության բառապաշարը սահմանափակ է. նրանք խուսափում են մանկատանից դուրս շփումներից: Մանկատանը գործում է գորգագործության արհեստանոց, որը արմատավորել է երեխաների մեջ արհեստների նկատմամբ դրական վերաբերմունք: Երեխաների մեծամասնությունը տիրապետում է մի շարք հմտությունների՝ ասեղնագործություն, հելունագործություն, շյուղագործություն, գորգագործություն: Վերջինիս մեջ ներգրավված են ինչպես աղջիկները, այնպես էլ տղաները: Երեխաները նաև վաստակում են որոշակի գումար իրենց աշխատանքների վաճառքից:

Երևանի մանկատան սաների մեծամասնությունը չի տիրապետում սոցիալական հմտությունների. երեխաները բազմակողմանի զարգացած են, սակայն չեն կարողանում կիրառել ձեռք բերած գիտելիքները: Անկաշկանդ են, ընկերասեր, սակայն միևնույն ժամանակ դժվարությամբ են հարմարվում նոր միջավայրին: Շատերին բնորոշ է զգացմունքների խիստ զսպվածությունը: Քանի որ մանկատանը մայրաքաղաքում է, ձևավորվել է միջազգային կազմակերպությունների կամավոր ներկայացուցիչների այցելությունների սովորույթը: Դրա շնորհիվ երեխաները հեշտությամբ շփվում են օտարերկրյա քաղաքացիների հետ՝ հաղթահարելով նույնիսկ լեզվական պատնեշները:

Հատկանշական է, որ երեխաների մեծամասնության մեջ ձևավորվել են միգրացիոն հակումներ:

Աղյուսակ 5-ի տվյալների համաձայն՝ Վանաձորի մանկատանը արձանագրվել է երեխաների բարձրագույն և միջին մասնագիտական կրթության բավականաչափ բարձր ցուցանիշ (48%)՝ պայմանավորված ուսումնական հաստատությունների բազմազանությամբ: Երեխաները կարողանում են կառուցել առողջ միջանձնային հարաբերություններ, սակայն չեն կարողանում կիրառել ձեռք բերած գիտելիքները, ստեղծել աշխատանքային հարաբերություններ:

Աղյուսակ 5. 1988-1992 թթ. ծնված սաների թվաքանակի բաշխվածությունը՝ ըստ կրթական մակարդակի

	Զատիկ	Բարձր./մ.մ. դրվժուժին կրթություն	Գաղիս	Բարձր./մ.մ. դրվժուժին կրթություն	Վանաձոր	Բարձր./մ.մ. դրվժուժին կրթություն	Գյումրի	Բարձր./մ.մ. կրթություն	Ընդամենը	Ընդամենը
2006	16	7	6	1	7	4	3		32	12
2007	14	6	5	3	13	5	3	1	35	15
2008	16	9	10	4	5	2	5	4	36	19
2009	16	6	4	3	15	6	4	3	39	18
2010	12	2	5	2	8	6	7	4	32	14
Ընդամենը	74	30	30	13	48	23	22	12	174	78

Գավառի մանկատանը ապաստան են ստանում երեխաներ հանրապետության բոլոր մարզերից: Շրջանավարտների մեծամասնությունը, ի վերջո, տեղափոխվում է Երևան, որն էլ ենթադրում է սոցիալական միջավայրի կտրուկ փոփոխություն: Նրանք հեշտությամբ են աշխատանք գտնում, չնայած այդ աշխատանքը սովորաբար կրում է ժամանակավոր բնույթ՝ վատթար պայմաններով: Վանաձորի և Գյումրու մանկատան շրջանավարտները թեև հետագայում էլ չեն փոխում սոցիալական միջավայրը, սակայն դժվարանում են աշխատանք գտնել: Երևանի մանկատան շրջանավարտները նույնպես բախվում են նույն հիմնախնդրին՝ ապավինելով մանկատան աջակցությանը. մեծ մասամբ 18 տարին լրանալուց հետո էլ մի քանի տարի շարունակում են ապրել մանկատանը: Մանկական խնամակալական հաստատությունների առանձնահատկությունները պայմանավորված են այն սովորույթներով, որոնք ստեղծել է մանկատան աշխատակազմը, կամ առկա սոցիալական պայմանների ազդեցությամբ, որոնք, սակայն, կրել են տարերային, ոչ նպատակային բնույթ: Առաջանալով որոշակի ժամանակահատվածում՝ դրանք շարունակում են պահպանվել և ձևավորել երեխաների մտածողությունը: Հետազոտությունները փաստում են, որ մանկատանը՝ որպես սոցիալական ինստիտուտ, չի փոխանցում պատմականորեն ձևավորված ավանդույթներ և չի ստեղծում իր ուրույն ավանդույթները:

Այսպիսով, մանկական խնամակալական հաստատությունների գործունեության մեջ չլուծված է մնում սովորությունների և ավանդույթների ձևավորման և կիրառման համատեքստում սաների արդյունավետ ադապտացման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման խնդիրը: Այսինքն՝ սոցիալ-աշխատանքային ադապտացումը և ինքնազարգացումը, սոցիալ-մանկավարժական գործառույթների համապատասխանեցումը մանկատան առանձնահատկություններին: Այս ամենը սաների արդյունավետ սոցիալականացման և հետագայում հասարակությանը ինտեգրվելու անհրաժեշտ նախապայմանն է: Ի վերջո, այս գործընթացը կախված է հասարակության մեջ ձևավորվող արժեքային համակարգից, որը միջոց է հասկանալու հասարակության յուրաքանչյուր անդամի (ներառյալ՝ մանկատան երեխայի) դերը, սահմանելու նրա պարտականություններն ու իրավունքները:

Երբ ընտանիքը չի իրականացնում վերոնշյալ առաքելությունը և անհատականության ձևավորման գործառույթը, ապա այդ դերը պետք է ստանձնի հաստատությունը, որի սոցիալական նշանակությունը չպետք է սահմանափակվի միայն երեխաներին խնամք տրամադրելով: Բազմաթիվ ուսումնասիրություններ փաստում են, որ հաստատության պայմանների բարելավումը չի լուծում այնտեղ խնամվող երեխայի խնդիրները, իսկ երեխային հաստատությունում տեղավորելն ընդամենը բացասական երևույթների հաղթահարման և կանխարգելման ուղղությամբ ոչ բավարար գործողություն է: Համապատասխան սոցիալական պայմանների ապահովման պարագայում արժեքային համակարգը կարող է ձևավորել վարքագծի պատճառականություն: Այսպիսով, պետական և ոչ պետական խնամքի հաստատությունում երեխայի տեղավորումը հասարակությունը պետք է ընկալի որպես ծայրահեղ միջոց:

ПРОБЛЕМЫ СОЦИАЛИЗАЦИИ ДЕТЕЙ ДЕТСКИХ ДОМОВ АРМЕНИИ В ПОСТСОВЕТСКИЙ ПЕРИОД

МНАЦАКАНЯН А. М.

Резюме

Политика социального обеспечения в постсоветской Армении сводилась к тому, чтобы определять детей, лишенных родительского попечения, в специально организованные учреждения (детские дома, интернаты). Фактически, общество не уделяло особого внимания проблемам семьи, а решало только вопрос опеки ребенка, что отрицательно сказывалось на процессе социализации ребенка в условиях детского дома. Особенности межличностных отношений в специальных детских учреждениях на сегодняшний день обусловлены обычаями и традициями, сформированными под влиянием существующих социальных условий или же коллективом детского дома, становясь в дальнейшем мотивацией реального поведения в социуме. По сей день остается нерешенным вопрос создания необходимых условий для успешной адаптации и развития детей в контексте национальных обычаев и традиций.